ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 փետրվարի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Վարդանյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ. Ներսիսյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ա. Եղիազարյան, Վ. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Շեկոյան

1. «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, մասնակիցներին ուղարկված ծանուցման, հայտերի ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 23.01.2018թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2018 թվականի հունվարի 30-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը	Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/
«Սմարթլայն» ՍՊԸ	X
«ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ	X
«ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ	X
«Տիգվակո» ՍՊԸ	X
«Լիմուշ» ՍՊԸ	X

2. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի 30 հունվարի 2018թ. Ժամը՝ 11:00-ի նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց նիստը կասեցնել և N 4 չափաբաժնի մասով ֆինանսական միջոցները գերազանցող գների նվազեցման շուրջ վարել միաժամանակյա բանակցություններ ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված նշված չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած հետևյալ Մասնակիցների՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ-ի հետ:

2.1 Գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նիստը սկսվել է 2018 թվականի փետրվարի 01-ին, Ժամը՝ 10:00-ին ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության շենքում, ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

2.2 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով իրականացվող գների նվազեցման շուրջ բանակցություններին ներկա էր միայն «Սմարթլայն» ՍՊԸ-ն:

2.3 Բանակցությունների արդյունքում N 4 չափաբաժնի մասով «Սմարթլայն» ՍՊԸ -ն առաջարկեց նոր նվազեցված գնային առաջարկ:

2.4 Ստորև ներկայացվում է 01.02.2018թ. Ժամը՝ 10:00-ին «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նիստի արդյունքում մասնակցի կողմից հայտարարած գնային առաջարկը N 4 չափաբաժնի մասով.

Չ/հ	Գնման ապրանքի անվանումը	Նվազեցված գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար (առանց ԱԱՀ ՀՀ դրամ)			
		«Սմարթլայն» ՍՊԸ		«ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ	
		Առաջարկված գինն առանց ԱԱՀ-ի	Նվազեցված գինն առանց ԱԱՀ-ի	Առաջարկված գինն առանց ԱԱՀ-ի	Նվազեցված գինն առանց ԱԱՀ-ի
4	Թուղթ, A4 ֆորմատի 1/21x29.7/	1067366,67	1041333,33	1301667,00	չի ներկայացել

2.5 Ելնելով վերոգրյալից, ստորև ներկայացվում են «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան կազմված հայտերի հիման վրա Մասնակիցների առաջարկած վերջնական գները՝

Չափաբաժնի համարը	Գնման ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնման առարկայի նախահաշվային գինը	Գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար (ՀՀդրամ)				
				«Սմարթլայն» ՍՊԸ	«ԱՐՄՔՈՄՓ ՎԻՆՆԵՐ» ՍՊԸ	«ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ	«Տիգվակո» ՍՊԸ	«Լիմուշ» ՍՊԸ
1	Նամակի ծրար, A5 ձևաչափի	հատ	80500,00	67050,00	-	63700,00	120690,00	-
2	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	հատ	30000,00	21250,00	22500,00	23750,00	-	32500,00
3	Թղթապանակ, կոշտ կազմով	հատ	300000,00	132500,00	175000,00	-	255000,00	250000,00
4	Թուղթ, A4 ֆորմատի 1/21x29.7/	տուփ	1249600,00	1041333,33	1301667,00	-	-	-
5	Գրիչ գելային	հատ	30000,00	25000,00	45000,00	-	-	-
6	Գրիչ գնդիկավոր	հատ	60900,00	50750,00	59208,00	48200,00	-	-

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ԳՀ միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի մասնակիցներն իրենց գնային առաջարկը ներկայացրել են ԱԱՀ-ն ներառյալ, բացի «Տիգվակո» ՍՊԸ-ից, որն իր գնային առաջարկը ներկայացրել է առանց ԱԱՀ-ի:

3. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում **հանձնաժողովը որոշեց՝**

3.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի NN 2, 3, 4, 5 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին, որի գները չեն գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

3.2 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի NN 1, 6 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ին, որի գները չեն գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

3.3 Ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ին և «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, տեխնիկական բնութագիրը, արտադրողը և ծագման երկիրը:

3.4 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա. Վարդանյան

Քարտուղար՝ ---------- Հ. Շեկոյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Գ. Ներսիսյան

2. ---------- Լ. Միքայելյան

Բացող անդամներ՝

1. ---------- Ա. Եղիազարյան

2. ---------- Վ. Թորոսյան